Քաղվածք

«Ամերիաբանկ» ՓԲԸ, Ամերիա գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ ընկերության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) (անգլերեն՝ European Bank for Reconstruction and Development (EBRD)) միջև 22.12.2015թ. կնքված Բաժնետերերի պայմանագրից /Shareholders Agreement/

23.12.2015թ. ք.Երևան

1. Ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող, Բանկի Կանոնադրության 7.1.2 կետի ա), բ), գ), զ), է) ժ) և ժդ) ենթակետերում նշված ստորև հարցերով գործում է Բաժնետերերի պայմանագրով ամրագրված որոշումների ընդունման հետևյալ կարգը.

ա) Կանոնադրության, Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կանոնակարգերի հաստատումը, դրանց փոփոխություններն ու լրացումները և/կամ նոր խմբագրությամբ հաստատումները,

բ) Բանկի վերակազմակերպումը,

գ) Բանկի լուծարումը,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը, բաժնետոմսերից բխող իրավունքների փոփոխությունը, բաժնետոմսերի փոխանցումների սահմանափակումները, ինչպես նաև Բանկի Կանոնադրական կապիտալի ավելացումը, այդ թվում՝ Կանոնադրական կապիտալի փոփոխությունը Բանկի աշխատակիցներին որպես խրախուսում Բանկի բաժնետոմսերի տրամադրմամբ,

է) Տնօրենների Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

ժդ) բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը:

Բաժնետերերի պայմանագրի համաձայն, վերը նշված հարցերով գործում է Բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշումների ընդունման հետևյալ կարգը.

Ընդհանուր ժողովում որոշումներն (այդ թվում՝ հեռակա կարգով քվեարկությամբ ընդունվող որոշումներն) ընդունվում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կողմից ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան չի պահանջվում ՀՀ օրենսդրությամբ, և պայմանով, որ որոշման ընդունման համար կողմ է քվեարկել Բանկի բաժնետեր հանդիսացող Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը:

Որոշումների ընդունման նշված կարգը կիրառելի չէ հետևյալ դեպքերում.

ա) Բանկի բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխումից (IPO) հետո,
բ) քվեարկությանը ներկայացված հարցով համապատասխան պայմանի կիրառումը և/կամ փոփոխությունների կատարումը պայմանավորված է օրենսդրական անհրաժեշտությամբ,
գ) Բանկի վերակազմակերպումը իրականացվում է ՀՀ տարածքում գրանցված իրավաբանական անձի մասնակցությամբ ձեռքբերման կամ միացման միջոցով,
դ) Բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացված Բանկի արտաքին աուդիտորական ընկերությունը միջազգային թվով 4/չորս/ խոշորագույն աուդիտորական ընկերություններից է,
ե) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը դադարում է հանդիսանալ Բանկի բաժնետեր:

2. Տնօրենների խորհրդի իրավասությանը պատկանող Բանկի Կանոնադրության 7.2.2 կետի ա), է) և իբ) ենթակետերում նշված ստորև հարցերով գործում է Բաժնետերերի պայմանագրով ամրագրված որոշումների ընդունման հետևյալ կարգը.

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
է) բաժնետոմսերի շուկայական գնի սահմանումը,
իբ)Բանկի Կանոնադրական կապիտալում մասնակցության/բաժնետոմսերի տրամադրման միջոցով աշխատակիցների խրախուսման ծրագրի և/կամ այդ իրավահարաբերությունները կարգավորող Ներքին իրավական ակտերի հաստատումը/փոփոխությունը:

Բաժնետերերի պայմանագրի համաձայն, վերը նշված հարցերով գործում է Տնօրենների խորհրդի որոշումների հետևյալ կարգը.

Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են Տնօրենների Խորհրդի նիստերին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, պայմանով, որ նշված որոշմանը կողմ է քվեարկել Բանկի բաժնետեր Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից նշանակված տնօրենը կամ վերջինիս ներկայացուցիչը:

Որոշումների ընդունման նշված կարգը կիրառելի չէ հետևյալ դեպքերում.

ա) Բանկի բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխումից (IPO) հետո,
բ) քվեարկությանը ներկայացված հարցով համապատասխան պայմանի կիրառումը և/կամ փոփոխությունների կատարումը պայմանավորված է օրենսդրական անհրաժեշտությամբ,
գ) Բանկի բաժնետոմսերի շուկայական գնի սահմանման դեպքում, եթե այն իրականացվել է ՀՀ օրենսդրության համաձայն և արտացոլում է Բանկի բաժնետոմսի արդար շուկայական գինը:
դ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը դադարում է հանդիսանալ Բանկի բաժնետեր:

Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրեն՝ Արտակ Հովհաննիսյան